Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) «Հրավիրիր ընկերոջդ» ծրագրի ներքո արշավի պայմաններ (այսուհետ՝ Արշավ)

Բանկի այն հաճախորդները (այսուհետ՝ հրավիրող), որոնք **2026թ. նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ** (այսուհետ՝ արշավի գործողություն) «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի շրջանակում **MyAmeria** հավելվածից «Հրավիրիր ընկերոջդ» ֆունկցիոնալի (այդ թվում՝ անհատական կոդի) միջոցով կուղղորդեն Բանկի հաշվետեր հաճախորդ չհանդիսացող այլ ֆիզիկական անձի (այսուհետ՝ հրավիրվող) հեռավար եղանակով դառնալ Բանկի հաշվետեր հաճախորդ՝ բացել հաշիվ և պատվիրել **Mastercard Digital** տեսակի քարտ, ակտիվացնել քարտը՝ **PIN սահմանելով**, քարտով կամ MyAmeria հավելվածով կատարել **առնվազն մեկ ելքային գործարք** (այսուհետ նաև՝ Հաջողված ուղղորդում), հնարավորություն կստանան մասնակցելու Արշավին, որի շրջանակում գործում է ստորև տրամաբանությունը՝ **ամեն** հաջողված ուղղորդման մասով:

1. Հաջողված ուղղորդման դեպքում **«Հրավիրիր ընկերոջդ»** ծրագրի մասնակից **Ուղղորդողները** (պահպանված են արշավով սահմանված պայմանները) մինչև 2027թ. հունվարի 13-ը ստանալու են խրախուսման վճար՝ստորև չափերով.
   - **բջջային հեռախոսահամարի միջոցով** ուղղորդելու դեպքում **5000 ՀՀ դրամ,**
   - **պրոմո կոդի** միջոցով ուղղորդելու դեպքում **1000 ՀՀ դրամ**:
2. Հաջողված ուղղորդման դեպքում «Հրավիրիր ընկերոջդ» ծրագրի մասնակից **Ուղղորդվողները** (պահպանված են արշավով սահմանված պայմանները) մինչև 2027թ. հունվարի 13-ը ստանալու են խրախուսման վճար՝ ստորև չափերով.
   - **բջջային հեռախոսահամարի միջոցով** ուղղորդվելու դեպքում **1000 ՀՀ դրամ,**
   - **պրոմո կոդի** միջոցով ուղղորդվելու դեպքում **5000 ՀՀ դրամ**:
3. Խրախուսման վճարները **Ուղղորդվողները/Ուղղորդողները** ստանալու են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված իրենց բանկային հաշվին:
4. Խրախուսման վճարները տրամադրվում են, եթե պահպանված են ստորև պահանջները.
   - Ուղղորդողը պետք է հրավերն ուղարկած լինի առավելագույնը **մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ**,
   - Ուղղորդվողը Բանկի հաշվետեր հաճախորդ պետք է դառնա և պատվիրի Mastercard Digital քարտ հեռավար եղանակով՝ գրանցվելով հրավերի արդյունքում

ստացված SMS հաղորդագրության հղմամբ կամ գրանցվելու ժամանակ օգտագործի Հրավիրողի անհատական կոդը **մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ**,

- Հրավերը համարվում է հաջողված, եթե Ուղղորդվողը
  - **հեռավար** եղանակով դառնա Բանկի հաշվետեր հաճախորդ,
  - պատվիրի **Mastercard Digital** տեսակի թվային քարտ,
  - ակտիվացնի այն՝ **PIN սահմանելով**,
  - քարտով կամ **My**Ameria հավելվածով **կատարի առնվազն մեկ ելքային գործարք** (Օրինակ՝ բջջային կապի վճարում):
- Արշավի ամփոփման պահին՝ **հունվարի 13-ի** դրությամբ, Ուղղորդողը և Ուղղորդվողը պետք է հանդիսանան Բանկի **հաշվետեր** հաճախորդ,

5. Արշավին որպես **Ուղղորդվող չեն կարող** մասնակցել այն անձինք, որոնք
   - 2025թ. հունիսի 1-ից հետո դադարեցրել և վերսկսել են գործարար հարաբերությունները «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ,
   - Մինչև 2026 թվականի նոյեմբերի 24-ը ներառյալ հանդիսանում են MyAmeria **Light** կարգավիճակով MyAmeria-ի օգտատեր

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, +(37412) 561111, office@ameriabank.am

Հավելված 17
Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների

Հրավիրիր ընկերոջդ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.10.2024թ. թիվ 01/148/24 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 03.09.2026թ. թիվ 01/136/26 որոշմամբ, և ուժի մեջ է 14.09.2026թ-ից:

1. Սահմանումներ

1.1. **Ուղղորդում՝** Բանկի ծառայություններից օգտվելու նպատակով անմիջապես Ուղղորդող անձի կողմից կամ Բանկի կողմից Ուղղորդող անձի անունից Ուղղորդվող անձին հրավերի ուղարկում, որը կարող է իրականացվել Բանկի Հեռավար սպասարկման համակարգում հասանելի եղանակով Ուղղորդման հղում պարունակող հաղորդագրություն ուղարկելու միջոցով, այդ թվում՝ Ուղղորդող անձի կողմից Ուղղորդվող անձի կոնտակտային տվյալները Բանկին տրամադրմամբ/Հեռավար սպասարկման համակարգ ներմուծմամբ, և/կամ Ուղղորդող անձի կողմից Պրոմոկոդի տրամադրմամբ կամ տարածմամբ:

1.2. **Ուղղորդող անձ՝** Բանկի **Հաճախորդ**, ով իրականացրել է **Ուղղորդում**:

1.3. **Ուղղորդվող անձ**՝ ֆիզիկական անձ, ով **Ուղղորդման հղման և/կամ Պրոմոկոդի** կիրառմամբ դիմել է Բանկի ծառայություններից օգտվելու նպատակով:

1.4. **Ուղղորդման հղում՝** ունիկալ մեկանգամյա օգտագործման հղում, որը **Բանկին** հնարավորություն է տալիս նույնականացնել համապատասխան **Ուղղորդող անձին** և **Ուղղորդումը**:

1.5. **Պրոմոկոդ՝** Բանկի կողմից **Ուղղորդող անձին** տրամադրվող և/կամ Բանկի Հեռավար սպասարկման համակարգում Ուղղորդող անձի կողմից գեներացվող կոդ, որի կիրառմամբ Բանկը նույնականացնում է համապատասխան **Ուղղորդող անձին** և **Ուղղորդումը**:

2. Ուղղորդման ծրագրի պայմաններ

2.1. Սույն **Հավելվածը** սահմանում է Բանկի «Հրավիրիր ընկերոջդ» ուղղորդման ծրագրի (այսուհետ՝ **Ուղղորդման ծրագիր**) պայմանները:

2.2. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդող անձը** իրականացնում է **Ուղղորդում**:

2.3. **Ուղղորդող անձը**, **Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Ուղղորդվող անձին** հասանելի դառնա **Ուղղորդող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.4. **Ուղղորդման ծրագրին** մասնակցելու համար **Ուղղորդվող անձը** պետք է անցնի հաղորդագրության մեջ նշված **Ուղղորդման հղումով** և/կամ կիրառի **Պրոմոկոդը, և** իրականացնի պահանջվող գործողությունները՝ տվյալ **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը** ստանալու համար: Բանկի կողմից կարող են սահմանվել **Ուղղորդման ծրագրին** մասնակցության հավելյալ պայմաններ: **Ուղղորդումը** համարվում է հաջողված, եթե **Ուղղորդվող անձը** սույն կետում նշված գործողությունների արդյունքում ստանում է **Ուղղորդման ծրագրով** առաջարկվող **Ծառայությունը**, և/կամ տեղի են ունենում **Բանկի** կողմից սահմանված՝ **Ուղղորդումը** հաջողված համարվելու այլ պայմանները (առկայության դեպքում):

2.5. **Ուղղորդվող անձը, Ուղղորդման ծրագրին** մասնակցելով, համաձայնում է, որ **Բանկի** հաճախորդ դառնալու դեպքում՝ **Ուղղորդող անձին** հասանելի դառնա **Ուղղորդվող անձի՝ Բանկի** հաճախորդ լինելու փաստը:

2.6. **Բանկի** կողմից **Ուղղորդման հղման** և/կամ **Պրոմոկոդի** համար կարող են սահմանվել վավերականության ժամկետ:

2.7. **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների շրջանակներում Բանկի **Հաճախորդների** ներգրավումը քաջալերելու, **Ծառայությունների** վաճառքն ընդլայնելու նկատառումներից ելնելով **Ուղղորդման ծրագրի** ներքո հաջողված **Ուղղորդման** դիմաց կարող են սահմանվել խրախուսանքի միջոցներ՝ դրամական վճարումների, զեղչերի և/կամ այլ հավելյալ հնարավորությունների տեսքով: Խրախուսանքի միջոցները, դրանց չափերը և տրամադրման կարգը սահմանվում են **Բանկի** կողմից իրականացվող արշավների, միջոցառումների և/կամ այլ հատուկ առաջարկների պայմաններով:

2.8. **Ուղղորդումը Բանկի** համար չի առաջացնում **Ուղղորդվող անձին Ծառայության** մատուցման պարտավորություն, քանի որ **Բանկը Ծառայություններ** մատուցում է **Օրենսդրությամբ** և **Բանկի** ներքին իրավական ակտերով ամրագրված պահանջների պահպանման դեպքում: